2022-2023

Պատմություն, բաց օլիմպիադա

Պատասխաններ

1. Լրացնե՛լ բաց թողնված բառերը.

Աստրախանում 1810 թվականին բացվեց Աղաբաբյան դպրոցը: Հովհաննես Լազարյանի կտակի համաձայն Մոսկվայում 1815 թ. բացվեց Լազարյան հեմարանը: Ներսես Աշտարակեցու ջանքերով 1824 թ. Թիֆլիսում հիմնվեց Ներսիսյան դպրոցը: 1.0

2. Մեծ Հայքի ո՞ր նահանգն է պատկերված քարտեզում: Ինչու՞ էր այն համարվում ամենանշանավորը: Որքա՞ն էր Մեծ Հայքի տարածքը, քա՞նի նահանգներից էր այն բաղկացած: **1. 0**

Քարտեզում պատկերված է Այրարատ նահանգը: Այն համարվում էր Մեծ Հայքի ամենանշանավոր նահանգը, քանի որ Հայաստանի մայրաքաղաքների մեծ մասը գտնվել են այնտեղ: Մեծ Հայքի տարածքը կազմում էր 300 հազար քառ. կմ: Այն բաղկացած էր 15 նահանգներից:

3. «Պապ թագավորն ու Ներսես եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լեռան վրա, և սուրբ Ներսեսը իր մշտատարած ձեռքերը երկինք բարձրացնելով, խնդրում էր Տիրոջից, որ խնայե իր ուխտին և սուրբ եկեղեցիներին. . . Մինչդեռ նա աղոթում էր Աստծուն, հայոց բոլոր զորքերի ճակատը կրակի նման գնում էր Պարսից զորքերի դեմ. . . »:

Ո՞ր պատմիչն է վերոգրյալ խոսքերի հեղինակը: Ո՞ր ճակատամարտի մասին է նա վկայում: Ինչպե՞ս ավարտվեց այն: **1:0**

Վերոնշված խոսքերի հեղինակը Փավստոս Բուզանդն էր: Նա վկայել է Ձիրավի ճակատամարտի մասին (371 թ.): Ճակատամարտը ավարտվել է հայկական զորքերի հաղթանակով: Ձիրավի ճակատամարտից հետո Պարսկաստանը առժամանակ հրաժարվեց Հայաստանը նվաճելու մտքից:

4. Լրացրե՛ք «Հայկական հարցի միջազգայնացումը» աղյուսակը: **2. 0**

Պայմանագիրը	Տարեթիվը	Հոդվածը	Բովանդակությունը	Տարածքային հարցերը	Նշանակությունը

Սան Ստեֆանոյի	1878 թ. փետրվարի 19	16-րդ	Բարձր դուռը պարտավորվում էր հայաբնակ մարզերում անհապաղ կենսագործել բարենորգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից:	Ռուսաստանին էին անցնելու Կարսը, Արդահանը, Բաթումը, Բայազետը, Էրզրումը, Ալաշկերտի հովիտը և հարակից տարածքները:	Սան Ստեֆանոյի պայմանագիրը բարձրացրեց Ռուսաստանի միջազգային հեղինակությունը, ուժեղացավ Ռուսաստանի ազդեցությունը Թուրքիայի վրա:
Բեռլինի վեհաժողովի	1878 թ. հուլիսի 1	61-րդ	Հայաստան անունը փոխարինվեց «հայաբնակ մարզեր» բառակապակցությամբ: Բարենորոգումներ կատարելու հստակ ժամկետներ չէր նշվում:	Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում Էրզրումը, Բայազետը, Ալաշկերտի հովիտը և հարակից տարածքները: Ռուսաստանին մնացին Բաթումը, Կարսը, Արդահանը, Արդվինը:	Հայ պատվիրակությունը հուսախաբ վերադարձավ Բեռլինից: Աբդուլ Համիդը անընդհատ հետաձգեց բարենորոգումներըև որոշեց հարցը լուծել հայերին կոտորելու միջոցով:

5. Ի՞նչ գիտեք նկարում պատկերված վայրի մասին: Ո՞ր թագավորն է այնտեղ թողել արձանագրություն: Ո՞ր թագավորության ներկայացուցիչներից է նա: Ո՞ր թվականներին է կառավարել: **2.0**



Նկարում պատկերված է «Մհերի դուռը», որտեղ արձանագրված է Վանի թագավորության դիցարանը: Արձանագրությունը թողել է Իշպուինի արքան, ով կառավարել է Քա.

825-810 թթ-ին: Նա Վանի թագավորության հերկայացուցիչներից է:

Միհերի դուռը գտնվում է Վան քաղաքում: Ժողովուրդը այն անվանում է նաև «Խալդյան դարպաս»:

6. Նշե՛ք Իսրայել Օրու և Հովսեփ Էմինի գործունեության վերաբերյալ առնվազն երեք տարբերություն և չորս նմանություն: Ստեղծեք համեմատական աղյուսակ ձեր պատկերացմամբ: **2.0**

Իսրայել Օրի	Նմանություն	Հովսեփ Էմին
1. Հայաստանի ազատագրությունը դրեց գործնական հողի վրա: 2. Կազմեց Հայաստանի ազատագրության վերաբերյալ երկու ծրագրեր՝ «Պֆալցյան» և «Մոսկովյան»: 3. Մահացել է չբացահայտված հանգամանքներում:	1. Ստացել են ռազմական կրթություն: 2. Հայաստանի ազատագրությունը կապել են Ռուսաստանի հետ: 3. Փորձել են կապեր ստեղծել հայ հասարակական-քաղաքական տարբեր խավերի միջև: 4. Կարևորել են զենքի միջոցով Հայաստանի ազատագրումը:	1. Զբաղվել է նաև հրատարակչական գործունեությամբ՝Մադրասի խմբակում: 2. Կյանքի վերջին տարիները ապրել է Հնդկաստանում: 3. Կարևորում էր ժողովրդին լուսավորելու հանգամանքը:

7. Ներկայացրե՛ք Կիլիկիայի հայկական պետության արքունիքում գործող գործակալությունները և նրանց գործունեությունը գծապատկերի տեսքով: **2.0**

Պետության գլուխ սկզբում կանգնած էր իշխանաց իշխանը, իսկ 1198 թ.-ից՝ թագավորը: Գործակալություններն են՝

Թագադիր- հանդիսությունների ժամանակ թագադիր գործակալն էր թագ դնում թագավորի գլխին, կապում արքայական նշանները, հետևում նաև արքունի կարգ ու կանոնի պահպանմանը:

Խնամակալություն- գործակալը կոչվում էր պայլ: Նա թագավորի առաջին խորհրդականն էր, իսկ արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան:

Արքունի քարտուղարություն- գլխավոր պաշտոնյան կոչվում էր կանցլեր, նա էր վարում բանակցությունները օտար երկրների ներկայացուցիչների հետ:

Սպարապետություն-գլխավոր պաշտոնյան կոչվում էր գունդստաբլ: Նա բանակի ընդհանուր հրամանատարն էր:

Սպասալարություն- արքունական հեծելազորի հրամանատար:

Մարաջախտություն- զբաղվում էր բանակի սպառազինության և պարենի մատակարարմամբ:

8. Հայոց ո՞ր թագավորության օրոք են կառուցվել ստորև տրված նկարներում պատկերված ճարտարապետական կոթողները: Ե՞ր է հիմնադրվել և անկում ապրել այդ թագավորությունը: Նշե՛ք այդ դինաստիայից մի քանի արքաների և նրանց կատարած նշանավոր գործերի մասին: Ո՞ր ճարտարապետական կոթողներն են պատկերված նկարում: **3.0**

1.

2.

3.

4.

Վերոնշյալ ճարտարապետական կոթողները կառուցվել են Բագրատունիների թագավորության օրոք: Այն գոյատևել է 885-1045 թվականներին: Նշանավոր արքաներից են՝ Աշոտ II Երկաթը, ով մղել է Սևանի նշանավոր ճակատամարտը, Աշոտ III Ողորմածը՝ նրա օրոք կառուցվել են Հաղպատի և Սնահիտի նշանավոր վանական համալիրները և Անին հռչակվել է Հայաստանի մայրաքաղաք, Գագիկ I-ը՝ իրա օրոք թագավորությունը հասել է իր հզորության գագաթնակետին, ունեցել է տարածքային նվաճումներ, կառուցվել է Անիի Մայր տաճարը, Գագկաշեն եկեղեցին: Նկարներում պատկերված են հետևյալ կոթողները՝

1. Անիի մայր տաճար/ Կաթողիկե եկեղեցի/

2. Հաղպատ

3. Ամբերդ

4. Անիի մայրաքաղաքի պարիսպները

9. Ու՞մ դամբարանն է պատկերված նկարում: Ո՞ր թվականներին է կառավարել այդ թագավորը: Ի՞նչ գիտեք այդ կոթողի մասին: **2,0**

Նկարում պատկերված է Չինաստանի Ցին Շի Հուանդի արքայի դամբարանը: Նա կառավարել է Քա. 246-210 թթ.-ին: 1974 թվականին՝ ջրհոր փորելու աշխատանքների ժամանակ, պատահաբար հայտնաբերվել է Ցին Շի Հուանդիի դամբարանը՝ նրա բանակի կրկնօրինակով 7500 կավե արձաններ՝ հետևակ, հեծելազոր, նետաձիգներ, ձիեր, մարտակառքեր՝ իրական չափերով:

10. Պատմական ո՞ր ժամանակաշրջանում են ստեղծվել հետևյալ նկարները: Ե՞րբ և որտե՞ղ է այն սկզբնավորվել: Նշե՛ք մի քանի գոչծիչների և նրանց ստեղծագործություններից: **3.0**



Հետևյալ նկարները ստեղծվել են Վերածնունդի ժամանակաշրջանում: Այն սկզբնավորվել է Հյուսիսային Իտալիայում, XIV-XVI դարերում: Վերածննդի գործիչներից են՝ Լեոնարդո դա Վինչին («Ջոկանդա», «Խորհրդավոր ընթրիք»), Ռաֆայելը («Տիրամայր», «Սիքստինյան տիրամայր»), Դանթեն («Աստվածային կատակերգություն»), Թոմաս Մոր («Ուտոպիա»), Էրազմ Ռոտերդամցի («Գովք հիմարության») և այն:

2022-2023